ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2023

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ԹԵՍՏ 1

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Անհրաժեշտ է թեստ-գրքույկի առաջադրանքները լուծելուց հետո ուշադիր լրացնել ձևաթուղթը. թեստ-գրքույկը չի ստուգվում, ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:

Ուշադիր կարդացե՛ք ձևաթղթի լրացման կանոնները:

1-10 առաջադրանքները ընտրովի պատասխանով են. ճիշտ պատասխանին համապատասխանող վանդակում հարկավոր է դնել X նշանը: Այդ առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր: Միևնույն առաջադրանքի համարի տակ մեկից ավելի նշում կատարելու դեպքում տվյալ առաջադրանքը գնահատվում է 0:

11-16 առաջադրանքներից և 17, 18 առաջադրանքների ենթաառաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր. պահանջին կարող են համապատասխանել մեկից ավելի թվեր: Ձևաթղթում դրանց համարներին համապատասխանող վանդակներում հարկավոր է դնել X նշանը: Այդ առաջադրանքների համար 1 միավոր կարող եք ստանալ այն դեպքում, եթե ճիշտ են արված բոլոր նշումները:

19-30 առաջադրանքներում պահանջվում է նշել 3 ճիշտ պատասխանները: Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1-ական միավորով, այսպես, եթե Ձեր 3 նշումներից 3-ն էլ ճիշտ են, վաստակում եք 3 միավոր, 2 ճիշտ նշման դեպքում՝ 2 միավոր, 1 ճիշտ նշման դեպքում՝ 1 միավոր: Նշումները պետք է կատարել միևնույն եղանակով՝ համարներին համապատասխանող վանդակներում դնելով X նշանը, սակայն տվյալ առաջադրանքի տողում ***չի կարելի կատարել 3-ից ավելի նշում:*** *Միևնույն տողում ցանկացած 4 և ավելի նշում ունենալու դեպքում առաջադրանքը գնահատվում է 0, եթե անգամ ճիշտ են որևէ 3 նշումներ:*

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար:

Ցանկանում ենք հաջողություն:

1 **Ո՞ր շարքի բառերից ոչ մեկում ուղղագրական սխալ *չկա:*** *(1 միավոր)*

1) միմիայն, մթագնած, դիցուկ, մաքառել
2) փասիան, գեղջկուհի, նվագածություն, աճպարար
3) անբասիր, այծեղջյուր, դողէրոցք, տարրորոշել
4) ձեռնտու, դրկից, հանապազոր, կցկտուր

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերի դիմաց է հնչյունափոխության վերաբերյալ նշումը ճիշտ տրված:** *(1 միավոր)*

1) սնամեջ – **ի>ը**, հոգաբարձու – ***ի***-ն սղվել է, ձվածեղ – **ու>վ**, կանխատեսել – ***ու***-ն սղվել է
2) պատենավոր – **յա>ե**, դիպակ – **ե>ի**, կարծրատիպ – ***ը***-ն սղվել է, ընդեղեն – **ու>ը**
3) գլխատառ – ***ու***-ն սղվել է, խցիկ – **ու>ը**, ակնդետ – չունի, ձնաբուք – **յու>ը**
4) սիզախոտ – **ե>ի**, ջրաշուշան – **ու>ը**, մշակութային – ***յ***-ն սղվել է, ընչաքաղց – **ի>ը**

3 **Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:** *(1 միավոր)*

1) վշտակցել–սգակցել, ամոլ–լծակից, մեծաշնորհ–վեհանձն, աղանդավոր–հերձվածող
2) կարկառել–երկարել, ակնազարդ–աղամանդահուռ, երկնաբախ–բարձրաբերձ, քիստ–հողաթափ
3) հորջորջել–անվանել, օթոց–բազմոց, վայել–ողբալ, քսու–շողոքորթ
4) թալկանալ–նվաղել, խանդակաթ–նախանձախնդիր, հապաղել–դանդաղել, հնոց–քուրա

4 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդ:** *(1 միավոր)*

1) լիակուրծք, հողմարգել, տիվանդորր, ցայտաղբյուր
2) վեհաժողով, մեծաքանակ, պարուրաձև, պաճուճազարդ
3) գետնախորշ, հրաշապատում, հրամանատար, բազկատարած
4) գագաթնակետ, արնաշաղախ, կեղևազուրկ, հանգստավայր

5 **Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-ներ* վերջավորությամբ:** *(1 միավոր)*

1) հարթաչափ, ոտնաչափ, վիպագիր, խմբագիր
2) հողմաչափ, որդեգիր, լուսաչափ, արձակագիր
3) ժամանակաչափ, առակագիր, կենսագիր, զեկուցագիր
4) ջրաչափ, տառաչափ, ակնարկագիր, հոդվածագիր

6 **Ո՞ր տարբերակում կան մեկից ավելի անկանոն բայեր, որոնք տվյալ ձևում անկանոնություն են դրսևորել:** *(1 միավոր)*

1) Մեկը չեղավ, որ իմանար վշտերս, Քնքուշ ձեռքով դարման աներ վերքերիս:
2) Գերզգայուն եմ դարձել վերջերս մի քիչ. Արցունք եմ տեսնում, լսում եմ մի ճիչ՝ Արցունքս պահել չեմ կարողանում:
3) Ճտի կտուցն առավ բնի թաղկած բրդին, Երազի մեջ կերած կուտը մնաց բկին:
4) Վա՜յ, մայրի՛կ ջան, տե՛ս, Բակն ու դուռը լի Ինչքա՜ն սպիտակ Թիթեռ է գալիս:

7 **Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բոլոր այն միավորների համարները, որոնք տրված տեքստում առկա *չեն:***

Մանուկները քար են վերցնում, գցում ձորը, կռացած ականջ դնում: Ապա լուռ իրար են նայում. նրանք չեն կարողանում որոշել՝ ջո՞ւրն է վշշում, թե՞ քամին:

Վայրի աղավնիների երամը փռռոցով անդունդից դուրս է թռչում, ցած ընկնող քարի աղմուկից վախեցած՝ ճախրում արևի տակ, նորից իջնում մթի մեջ: Արևից փայլփլում են նրանց ճերմակ թևերը: Հետո ներքևից հարյուրավոր թևեր թափահարում են, հետզհետե սուզվում անդունդը: Լուռ լսում են. երբ այլևս ձայն չի գալիս ցածից, կամաց հարցնում են.

- Ո՞ւր կորան:

1. համադասական շաղկապ, 2. դերանվանական հոլովման ենթարկված բառ, 3. ***ու*** հոլովման ենթարկվող բառ, 4. թվական, 5. բնաձայնական ձայնարկություն, 6. կրավորական սեռի բայ, 7. պատճառական բայ, 8. հարաբերական դերանուն, 9. բազմապատկական բայ

1) 1, 2, 4, 6, 7, 8
2) 2, 4, 5, 6, 7
3) 1, 3, 5, 7, 9
4) 2, 3, 4, 6, 8, 9

8 **Ո՞ր նախադասության մեջ փակագծերում նշված շարահյուսական պաշտոնը կատարող անդամ *չկա:*** *(1 միավոր)*

1) Ինչքան էլ սիրեի այն պատանուն, որն ինձ հետ ապրանք էր կրում, ես չէի կարող նրա հանդեպ թաքուն նախանձ չունենալ: *(հանգման անուղղակի խնդիր)*
2) Ինձ սկսեց ակամա հետաքրքրել ծերունու՝ այդ մարդկանց ուղղված խորհրդավոր հայացքը: *(հատկացուցիչ)*
3) Պարզ էր, որ նա խույս էր տալիս այդ մարդուց, որն այդ ժամանակ շատ տարօրինակ էր իրեն պահում: *(անջատման խնդիր)*
4) Մեզ հայտնեցին, որ մինչև անգամ հարևան գյուղից են տեսել տունը վառողին ձորով փախչելիս: *(չափի պարագա)*

9 **Ո՞ր նախադասության մեջ պետք է 3 բութ դնել:** *(1 միավոր)*

1) Փոքրաթիվ ժամավորները առավելապես ծերունիներ ու պառավներ ընդարձակ եկեղեցու մացառներով պատած բակի ստվերոտ մի անկյունում բարեպաշտ դեմքով ունկնդրում էին ժամերգությունը:
2) Քահանան նայեց նրա աչքերին աշխատելով հիշել որտեղ է տեսել այդ կնոջը և շուռ գալով արագ հեռացավ:
3) Եկեղեցուց վերադառնալուն պես նա քայլերն ուղղեց դեպի Օհանի քաղաքի կենտրոնում գտնվող արհեստանոցը և բարև տալով սկսեց ցանկալի զրույցը անդադար աջուձախ նայելով:
4) Քաղցած թուխսը ճուտիկների հետ մտնում էր տուն հացի տաշտը քրքրելու և ոչինչ չգտնելով ծվարում էր սենյակի մի անկյունում թախտի տակ:

10 **Ո՞ր տարբերակում նախադասության անդամի շարահյուսական վերլուծության սխալ *չկա:*** *(1 միավոր)*

Մեզ դուր էր գալիս հինավուրց տունը, որովհետև մեր մանկական չարաճճիությունների մասին հիշողություններ էր պահպանում: Սա գնահատելի է հատկապես այսօր, երբ օր օրի հանուն շահի քանդում են բոլոր հին շինությունները:

Առավոտյան վեր էինք կենում ժամը յոթին և զբաղվում տան մաքրությամբ, իսկ տասնմեկին մոտ թողնում էինք վերջին սենյակները և անցնում խոհանոց: Ուղիղ կեսօրին ճշտապահորեն նախաճաշում էինք և մի քանի կեղտոտ ափսե լվանալուց զատ այլևս ուրիշ անելիք չունեինք:

1) ***մեզ*** – հանգման խնդիր, ***չարաճճիությունների մասին*** – որոշիչ, ***տունը*** – ուղիղ խնդիր
2) ***վեր էինք կենում*** – բաղադրյալ ստորոգյալ, ***ճշտապահորեն*** – ձևի պարագա, ***սենյակները*** – ուղիղ խնդիր
3) ***հանուն շահի*** – նպատակի պարագա, ***մի քանի*** – որոշիչ, ***հատկապես*** – չափի պարագա
4) ***խոհանոց*** – տեղի պարագա, ***անելիք*** – ուղիղ խնդիր, ***մաքրությամբ*** – միջոցի խնդիր

11 **Բառերից կամ բառակապակցություններից որոնցո՞ւմ գրության սխալ կա:**

1. տիեզերագնաց օդաչու, 2. Յորքի դքսություն, 3. հարավ-ամերիկյան, 4. արքայից արքա, 5. Հեռավոր Արևելք, 6. Հավայան Կղզիներ, 7. տեր-Սահակ քահանա, 8. սրբություն-սրբոց, 9. Մաշտոցյան գրեր

12 **Ո՞ր բառերում հնչյունափոխություն *չկա:*** *(1 միավոր)*

1. կենսագիր, 2. մահագուշակ, 3. ժուժկալ, 4. ջերմամեկուսիչ, 5. սենեկապետ, 6. կրծոսկր, 7. տարկետում, 8. հեռավար, 9. քմահաճ

13 **Ո՞ր բառազույգերի բառերն են հոմանիշներ:** *(1 միավոր)*

1. բագին–գավիթ, 2. ծանակել–հեգել, 3. պարպվել–սպառվել, 4. ցնորք–բանդագուշանք, 5. անլուր–անպատասխան, 6. եղկելի–ողորմելի, 7. ծփանք–վետվետանք, 8. մասնատել–բաղդատել, 9. անոսր–խիտ

14 **Ո՞ր դարձվածքներն են սխալ բացատրված:** *(1 միավոր)*

1. ***խաղից դուրս գալ*** – ասպարեզը թողնել, 2. ***ականջը ծանր*** – դժվարությամբ լսող, 3. ***պոչին նստել*** – հերթ կանգնել, 4. ***դիտողի դերում լինել*** – իրավիճակին քաջատեղյակ լինել, 5. ***մազը թեքվել*** – օրհասական վիճակում լինել, 6. ***սիրտը բարակ*** – դյուրազգաց, նուրբ, 7. ***սիզիֆյան աշխատանք*** – ապարդյուն գործ, 8. ***ձեռքերը թուլանալ*** – հիվանդանալ, 9. ***օձի կծած*** – սաստիկ չար, անգութ

15 **Ո՞ր բառերը կազմությամբ բարդածանցավոր *չեն:*** *(1 միավոր)*

1. բազմաբանուկ, 2. մասնաբաժին, 3. լայնարձակ, 4. տագնապահար, 5. աստղակուտակ, 6. վրձնահարված, 7. տաժանակիր, 8. հյուրասենյակ, 9. սաղարթապատ

16 **Տրված բառերից որո՞նք միայն մեկ խոսքիմասային արժեք ունեն (պատկանում են միայն մեկ խոսքի մասի):** *(1 միավոր)*

1. նման, 2. չնայած, 3. հակառակ, 4. մեկ, 5. հանուն, 6. այլ, 7. անկախ, 8. այսչափ, 9. խամաճիկ

17 **Նշել տվյալ բնորոշմանը համապատասխանող նախադասությունների համարները:** *(9 միավոր)*

1. Օգոստոսի վերջին օրերին Թումանյանը որբերի և գաղթականների գործով զբաղվելու նպատակով մի քանի օրով Էջմիածնից եկավ Երևան, որտեղ դրությունը կարծես թե լավ էր: 2. Վատն այն էր, որ գաղթականներին արգելել էին Էջմիածնից դուրս գալ, իսկ հիվանդություններն օր օրի սաստկանում էին, տարածվում, եղանակները՝ ցրտում: 3. Էջմիածնի դժոխքում մնալով մոտ երկու ամիս՝ Ամենայն հայոց բանաստեղծն աշխատում էր զօրուգիշեր, դժգոհում էր գաղթական զանազան կոմիտեներից, որոնց կողմից գործը ժամանակին և պատշաճ չէր կազմակերպվում, դժգոհում էր անգամ հոգևորականությունից: 4. Ամեն ինչից հուզվում էր. պահեստներում տեսնելով հագուստեղեն և ուտեստ՝ վրդովվում էր, որ դրանք ըստ նպատակի չեն բաժանվում:

5. Օգոստոսին, սակայն, դրությունը լավացավ. բացեցին հինգ հիվանդանոց՝ երկու հարյուր մահճակալներով, որբանոց՝ երեք հազար երեխայի համար: 6. Սեպտեմբերին Թումանյանը Թիֆլիս վերադարձավ թույլ, հիվանդ, իսկ երկու օր անց ստացավ իր եղբոր՝ Ռոստոմի սպանության լուրը և անմիջապես մեկնեց Դսեղ՝ չհայտնելով՝ երբ կվերադառնա: 7. Հետ եկավ բոլորովին հուսահատված, երկու ամիս մնաց անկողնում պառկած:

8. Տխուր էր. ոչ ոքի չէր ընդունում, ոչինչ նրան չէր հանգստացնում, երեկոները հաճախ խոսում էր եղբորից, հիշում Լոռիում նրա հետ անցկացրած օրերը և չէր կարողանում հաղթահարել վիշտը: 9. Իսկ երբ ինքնազգացողությունը վատանում էր, գրադարանից մի ինչ-որ գիրք էր վերցնում, խնդրում աղջկան կարդալ՝ թեթևանալու, թերևս մոռացության տալու անտանելի վշտերը:

1. որոշյալ կամ անորոշ դերանուն ունեցող նախադասություն(ներ)
2. հարադրավոր բայ ունեցող նախադասություն(ներ)
3. վերաբերական ունեցող նախադասություն(ներ)
4. մեկից ավելի անկախ դերբայ ունեցող նախադասություն(ներ)
5. հարաբերական դերանուն ունեցող նախադասություն(ներ)
6. կրավորական սեռի բայ ունեցող նախադասություն(ներ)
7. մակբայ ունեցող նախադասություն(ներ)
8. կապ ունեցող նախադասություն(ներ)
9. սոսկածանցավոր բայ ունեցող նախադասություն(ներ)

18 **Նշել տվյալ բնորոշմանը համապատասխանող նախադասությունների համարները:**
(9 միավոր)

1. Անմիտ սովորություններով լի է կյանքը, և այդպիսի սովորությունների շարքը պետք է դասենք, անշուշտ, մի կողմից՝ հյուր լինելու, մյուս կողմից՝ հյուրին պատիվ տալու արարողությունները: 2. Իսկ կեղծիքը չի կարող ինձնից ավելի կատաղի թշնամի ունենալ. քաղաքավարությունը, համեստությունը, ամոթը և այլ նման առաքինությունները քողարկված կեղծավորություններ են, որոնք մարդիկ հորինել են իրենց վատ ներքինը ծածկելու նպատակով, ինչպես աղբակույտն են ծածկում թավշյա ծածկոցով: 3. Մարգարյա՛ն, նկատե՞լ ես, որ մարդիկ խմելիս փիլիսոփա են դառնում. թեև առհասարակ չեմ սիրում փիլիսոփայությունը, բայց այն թերևս պետք է գալիս: 4. Եվ ըստ իմ փիլիսոփայական մտածողության՝ հիմարներ են այն մարդիկ, որոնք այսօր աշխատած կոպեկը չեն ծախսում՝ վաղը քաղցած չմնալու համար, բայց մոռանում են, որ այսօր արդեն քաղցած են: 5. Իսկ ես, ընդհակառակը, որքան էլ դրամ ունենամ, վաղը գրպանումս ոչ մի կոպեկ չի լինի: 6. Քերականության մեջ պետք է ապառնի ժամանակ չլինի:

7. Ապագա չկա, որովհետև հայտնի չէ, իսկ ինչն անհայտ է, այդ մասին մտածելը, բնականաբար, հիմարություն է: 8. Թեև ինձնից քեզ խրատ չի հասնի, այնուամենայնիվ խորհուրդ կտամ՝ երբեք չմտածես վաղվա մասին, այլապես ամբողջ կյանքդ կթունավորես: 9. Իսկ ի՞նչ է կյանքը այն դժբախտ մահկանացուի համար, որի անունը մարդ է. որոպեական հաճույք կամ հաճոյական որոպեների մի շարահար շղթա, մինչև կհասնի անխուսափելի այն սահմանին, որից այն կողմ արդեն գտնվում է հավերժի թագավորությունը:

1. դերբայական դարձված ունեցող նախադասություն(ներ)
2. անուղղակի խնդիր ունեցող նախադասություն(ներ)
3. բաղադրյալ ստորոգյալ ունեցող նախադասություն(ներ)
4. ուղիղ խնդիր ունեցող նախադասություն(ներ)
5. նպատակի պարագա ունեցող նախադասություն(ներ)
6. դերանունով արտահայտված ենթակա ունեցող նախադասություն(ներ)
7. որոշիչ ունեցող նախադասություն(ներ)
8. հատկացուցիչ ունեցող նախադասություն(ներ)
9. ժամանակի պարագա ունեցող նախադասություն(ներ)

19 **Հատվածներից 3-ում դարձվածք *չկա:* Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. Լուսնյակն անցավ, մութը մթին
   Մաղեց հեզ գետի վրա...
   Ծանր խշշաց լացող ուռին,
   Սիրտս տխուր կհևա:

2. Ա՛ռ քո թևերին, տա՛ր ինձ, ժամանա՛կ,
   Ես հետ մնալուց շատ եմ վախենում:
   Հուշերից որքան հեռու եմ կենում,
   Մեկ է, կապում են թևերս նրանք:

3. Լուսաբացի թավշյա փեշով սրբեմ
   Ծիրկաթինոտ ճակատն իմ Սալվարդի,
   Հոգնած իմ տարիքից չնեղսրտեմ,
   Խմեմ պաղ ջուրն ու կաթն իմ Սալվարդի:

4. Սատանան գիտի, թե ուր է տանում
   Խոնավ շրշյունը խազալ-խաշամի
   Մի ուշքը շաղված շնչահատ քամի:
   Ցուրտ է, կմեռնի մամուռն անտառում:

5. Եկար, ասացիր. «Ամեն ինչ անցավ,
   Փակված են բոլոր ճամփեքը դարձի…
   Մեր անջատումը ոչ ոք չիմացավ
   Հեռու-հեռավոր այն աստղից բացի:

6. Ամենքի համար ամեն ինչ արել,
   Նստել, արածիս վարձին եմ նայում.
   Գժված գլուխս ափիս մեջ առել,
   Անցած օրերիս դարձին եմ նայում:

7. Սի՛րտ, անցել է սրտի դարը:
   Էլ չեն երդվում քո արևով,
   Չեն տաքանում քո բարևով,
   Էլ չես վառում դու վառվելով:

8. Ես ուզեցի երգել գովքը Աստծո,
   Երգել փառքը պայծառ սիրո ու հացի,
   Սիրտս լցվեց… բայց չգիտեմ, թե ինչու
   Գորշ օրերի տաղտկությունը երգեցի:

9. Իմ հեռավո՛ր, հեռո՛ւ սարահովիտ,
   Երգս կանչն ունենար սարահավիդ,
   Իմ հեռավո՛ր, հեռո՛ւ սարահովիտ,
   Երգս ոտքերն ընկներ արարողիդ:

20 **Բառերից 3-ի բացատրությունը սխալ է: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. ***դրանդի*** – փայտ տաշելու գործիք
2. ***սնդուս*** – ողորկ ու փայլուն երեսով գործվածք
3. ***տվնջյան*** – ցերեկային
4. ***պայլ*** – ասպետի փոխանորդ կիլիկյան շրջանում
5. ***ջրանույշ*** – ջրային հավերժահարս
6. ***կամկար***– դանդաղ, ծանրաշարժ
7. ***զմռսել*** – ուժեղ ճզմել, մամլել
8. ***կոչնական*** – հրավիրյալ անձ, հյուր
9. ***խաժամուժ*** – կապտամոխրագույն մշուշ

21 **Շարքերից 3-ում տրված վերջածանցը կարող է բոլոր բառերի արմատներին (արմատներից մեկին) միանալ և բառ կազմել առանց երկրորդ ածանցի: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. ***-անի*** – ազատամիտ, գյուղապետ, հրետակոծել
2. ***-ի*** – բնակավայր, կանաչություն, բռնակալ
3. ***-ություն*** – կարմրատակել, վայրենանալ, հյուրամեծար
4. ***-արար*** – պարբերություն, գազանակերպ, հերոսածին
5. ***-իք*** – ձեռագործ, օձագալար, տարեմուտ
6. ***-ակի*** – լայնություն, հաճախադեպ, ուղղանկյուն
7. ***-անոց*** – հիվանդատես, թռչնաբույծ, տասնապատիկ
8. ***-ար*** – երկարակտուց, այլակերպ, տպագրություն
9. ***-ակ*** – սևագործ, աթոռանիստ, սիրունատես

22 **Նախադասություններից 3-ի ընդգծված բաղադրիչի բնութագիրը սխալ է տրված: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. Մի շաբաթ էր՝ <u>անձրևները դադարել էին</u>, և մթնոլորտը տոգորվել էր գարնան արբեցուցիչ բույրով: *(գերադաս)*
2. Թեև արևը կիզում էր, և <u>ծածկեր չկային</u>, բայց, փույթ չէ, աշխատում էին պայտարները, դարբինները, դերձակները՝ բոլորն ի սպաս բանակի: *(ստորադաս)*
3. Լրտեսները վերադարձան և հայտնեցին, <u>թե մնացել է միայն մի քանի քայլ տարածություն</u>, որ ջրանցքի արգելքը բացվի: *(թերի)*
4. Մեծամոր անունը կրող քաղաքը եղել է ոչ միայն հեթանոսական կենտրոն, այլև բարձրաշխարհիկ մարդկանց բնակավայր, <u>և, ըստ երևույթին, այն եղել է մայրաքաղաք:</u> *(համառոտ)*
5. Գիշե՜ր, գիշե՜ր, լռությո՜ւն, <u>Անուշ թախծի լուսե երգ</u>. փռվի՛ր, փռվի՛ր իմ հոգում, խաղաղությո՛ւն անեզերք: *(անվանական անդեմ)*
6. Մայրս միշտ ասում էր. <u>«Հասարակ բանի համար կռիվ չեն անի»</u>: *(անենթակա)*
7. Մեր գալակտիկայում գերնոր աստղի բռնկում, <u>ինչպես վկայում են աստղագիտական հնագույն գրառումները</u>, վերջին անգամ տեղի է ունեցել շուրջ հազար տարի առաջ: *(միջանկյալ)*
8. <u>Առավոտյան թագավորը շատ է տխրում</u> և մարդիկ է ուղարկում աղջկա սենյակը, որտեղից նրան տանում են պալատի զնդանը: *(գերադաս)*
9. Դիմակալի տակ դժվար էր ճանաչել նրան. <u>ով էր դա՝</u> ոչ ոք չէր կռահում: *(ստորադաս)*

23 **Նախադասություններից 3-ի գծապատկերում սխալ կա: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. Մինչ այդ ես նկատել էի, որ նրան չեն սիրում կալանավորները, միշտ գանգատվում են նրանից, ատում են նրան, որովհետև խիստ վատ էր վարվում նրանց հետ, երբ դժբախտները գնում էին իրենց հաշիվները ստանալու:



2. Շատ կուզենայի, որ իմ հովիտը արևոտ լիներ, կուզենայի, որ նրա բնակիչները միայն լավ մարդիկ լինեին, և իմ մարդկանց կյանքը ծաղկեր լավ ժամանակներում, բայց ստիպված իմ ժամանակի տարեգիրն եմ դարձել:



3. Վասակը, որ թրծված էր բազում մարտերում, որոնցից միշտ հաղթանակով էր դուրս եկել, ամբարտավան արքային, որ այդօրինակ համարձակություն ցուցաբերեց, սրախողխող կաներ կռվի դաշտում, բայց այժմ, քանի որ անզոր էր շղթաների մեջ, բավարարվեց միայն հպարտ պատասխան տալով:



4. Առանց իմանալու, թե ով է այդ գործը կատարել, և ում պիտի դրա համար մեղադրել, դու, որ շրջահայաց մարդ ես, մեղադրում ես մի մարդու, որը այն օրը, երբ կատարվել է դեպքը, քաղաքում չի եղել:



5. Առաջվա համեմատությամբ հրապարակը դատարկ էր, և այնքան լուռ էր շրջակայքը, որ թվում էր՝ քաղաքում մարդ չկա, և ամայությունն է թագավորում ամենուր, բայց այդ լռությունը խաբուսիկ էր. տներում, ուր փակված էին քաղաքացիները, կյանքն ընթանում էր սովորական հունով:



6. Ծերունին լռեց. չգիտես նիրհո՞ւմ էր՝ աչքերը բացած, թե՞ խորհում, իսկ իշխանը, կապույտ լայն թիկնոցն ուսերին, շարունակում էր անցուդարձը՝ երբեմն նայելով Վաղարշապատի ճանապարհին, ուր դեռևս ոչ ոք չէր երևում, և քաղաքի հրապարակին, ուր հետզհետե մեծանում էր բազմությունը:



7. Մահվանից առաջ Արտաշեսը, որ այնքան սիրում էր լեռների ու կիրճերի երկիր Հայաստանը, երազում էր վերջին անգամ տեսնել հայրենի ծխանի ծուխը, որ խաղաղ բարձրանում էր տների երդիկներից, Նավասարդի առավոտը, տենչում էր լսել փողերի ձայնը, բայց արքային, ավա՜ղ, այլևս վիճակված չէր վայելել այն ամենը, ինչ սիրում էր:



8. Մի երիտասարդ դիմանկարիչ, որ բոլորովին էլ տաղանդ չուներ, թեև ինքը հակառակ կարծիքի էր, և գործերն էլ վատ էին, տխուր նստել էր արվեստանոցում իր մանկամարդ կնոջ հետ, որ նույնպես անտրամադիր էր, որովհետև որքան ժամանակ է՝ ոչ ոք չէր մտնում արվեստանոց՝ նկար պատվիրելու:



9. Էգեյան ծովի կղզիներից մեկում, որտեղ կային տեսակ-տեսակ թռչուններ, որ խատուտիկ թևեր ունեին, բազմագույն ծաղիկներ, որ աչքի էին ընկնում արբեցնող բույրերով, աղբյուրներ, որ այնքան զվարթ կարկաչում էին, և որտեղ սաղարթախիտ անտառներ էին շուրջբոլորը, կար մի եղջերու, որ հավերժահարսերի սիրելին էր:



24 **Նախադասություններից 3-ի ստորադաս բաղադրիչների բնույթները սխալ են տրված: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. Թեկուզ երկար ժամանակ պառկած էի անկողնում, բայց քուն չէր գալիս աչքերիս: *(զիջման պարագա)*
2. Քո նվերը ինձ այն կլինի, որ այցելես քո պապերի ծննդավայրը: *(ստորոգելի)*
3. Մենք հպարտանում, պարծենում ենք նրանցով, ովքեր իրականացրին այդ ազգանվեր գործը: *(միջոցի խնդիր)*
4. Երիտասարդներից մի փոքր հեռու նստած էր ավանի փոստատան կառավարիչը, որ բարեդեմ, խելոք աչքերով և գորշավուն մորուքով մի մարդ էր: *(բացահայտիչ)*
5. Ճանապարհին հանդիպող գյուղացիները պատմում են՝ ինչպես է նա իր զզգվված մարմնով անցել փոշու մեջ թաթախված այդ ամբողջ ճանապարհը: *(ձևի պարագա)*
6. Մայրս այդպես էլ չսպասեց, որ ամուր սեղմվեմ իր կրծքին և հեկեկամ: *(հանգման խնդիր)*
7. Առաջին իրարանցումից հետո թոնրատանն այնքան լուռ էր, որ տերևների սվսվոցն անգամ լսվում էր պարտեզից: *(չափի պարագա)*
8. Ադամի համար անսպասելի էր, որ տեսավ Լիլիթին սատանայի պարանոցից կախ ընկած: *(ուղիղ խնդիր)*
9. Իմ երազներն ինձ սլացնում էին հեռու, անծանոթ աշխարհներ, ուր իմ պատանեկան երևակայությունն ստեղծել էր այնքան եղեմներ: *(տեղի պարագա)*

25 **Նախադասություններից 3-ում կետադրական սխալ *չկա:* Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. Քաղաքաբնակ իրենց ընկերներին երբ հրաժեշտ տվեցին, գյուղի երեխաները շատ տխրեցին. մեկ էլ ե՞րբ կտեսնեն իրար:
2. Թափառիկ գուսանները ներբողում էին ասպետների անձնվեր ճակատումները, սխրալի գործերը և նրանք, անշուշտ, քեզ էին ներբողում, իմ սիրելի՛ կտրիճ:
3. Վաղորդյան արևի դեղնազօծ ճառագայթները թրթռալով բարձրանում էին բերդի պարիսպներն ի վեր, երբ հանդիպակաց մզկիթի մինարեթից լսվեց մոլլաների աղոթքը՝ մելամաղձոտ, տաղտկալի:
4. Հիմա սենյակիս լուսամուտից բացվում է հարազատ բնանկար. լեռներ են, բարդիներ, իսկ ներքևում՝ կանաչների մեջ կորած ուրախ ձորակում, աղմկում է մի փոքրիկ գետակ:
5. Տեսնելով Վասակին անձով փոքր (սպարապետը միջահասակից ցածր, փոքրամարմին տղամարդ էր) Շապուհը՝ այդ գոռոզ ու նենգամիտ բռնակալը, արհամարհանքով զննեց նրան:
6. Ո՞վ էր նա, ո՞ւմ աղջիկն էր, որտե՞ղ կարելի էր տեսնել նրան կամ ծանոթանալ նրա հետ՝ այս հարցերը մեծ մտատանջություն էին պատճառում երիտասարդին:
7. Աղոթարան մտավ բարձրահասակ մի աշխարհական՝ գլուխը ցած խոնարհած և անշշուկ քայլերով մոտեցավ աղոթողին՝ կանգնելով պատշաճ հեռավորության վրա:
8. Դիլան դային մինչև ծնկները բաց ոտքերով ճմլում էր խաղողը, և շիրան գլոր-գլոր հոսելով՝ ծորում էր կավե կարասը:
9. Մի պարզկա գիշեր՝ Արաքսի՝ գաճաճ թփուտներով ծածկված ափին, երևաց մոլլան՝ ոտքից գլուխ կանաչ հագած:

26 **Պարզ նախադասություններից 3-ը ճիշտ են փոխակերպված բարդ ստորադասական: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. *Մեքենան տեսնելուն պես նրանք կանգ առան ընդարձակ բակի ծառախիտ հատվածում:*
   Հենց նրանք տեսան մեքենան, կանգ առան ընդարձակ բակի ծառախիտ հատվածում:

2. *Անիում լինելու օրերին վաղ առավոտից մինչև կեսօր նրանց հետ այրվում էի բարկ արևի տակ:*
   Երբ Անիում էի լինում, վաղ առավոտից մինչև կեսօր նրանց հետ այրվում էի բարկ արևի տակ:

3. *Ստախոսության հանդեպ նրա ընդգծված ատելությունը առաջ էր եկել իր նախկին ամուսնու շարունակ ստելուց:*
   Ստախոսության հանդեպ նրա ընդգծված ատելությունը առաջ էր եկել, երբ իր նախկին ամուսինը շարունակ ստել էր:

4. *Հայ ազգի բազմադարյան հիշատակարաններն իր մեջ ամփոփող այս հրաշակերտ վկայականը գտնվում է Գեղարդասարի լանջին:*
   Այս հրաշակերտ վկայականը, որ իր մեջ ամփոփում է հայ ազգի բազմադարյան հիշատակարանները, գտնվում է Գեղարդասարի լանջին:

5. *Եվ հավատում է ժողովուրդը իրավունքի և եղբայրության դրոշակի՝ հայրենիքի այս թախծապատ լեռների և գլխիկոր կաղնիների վրա նորից ծածանվելուն:*
   Եվ հավատում է ժողովուրդը, որ նորից կծածանվի իրավունքի և եղբայրության դրոշակը հայրենիքի այս թախծապատ լեռների և գլխիկոր կաղնիների վրա:

6. *Չէր խնայում օտարաբնակ ընկերներին, բարեկամներին և եվրոպական սրճարաններում հայ ազգի համար արցունք թափողներին:*
   Չէր խնայում օտարաբնակ ընկերներին, բարեկամներին և նրանց, ովքեր եվրոպական սրճարաններում հայ ազգի համար արցունք էին թափում:

7. *Հայ զինվորի պարտավորությունն է կռվի դաշտում պաշտպանել հայրենիքի սահմանները:*
   Հայ զինվորի պարտավորությունն այն է, որ կռվի դաշտում պաշտպանի հայրենիքի սահմանները:

8. *Ամեն անգամ՝ նրա գունատ դեմքին և անկենդան աչքերին նայելիս, սիրտս ճմլվում է վշտից ու կարեկցությունից:*
   Սիրտս ճմլվում է վշտից ու կարեկցությունից, երբ ամեն անգամ նայում եմ նրա գունատ դեմքին և անկենդան աչքերին:

9. *Այդ արշավախմբի մեջ էր նաև Սմբատը՝ միևնույն տարիներին ինձ հետ համալսարանում սովորած ընկերս:*
   Այդ արշավախմբի մեջ էր նաև Սմբատը, որը միևնույն տարիներին ինձ հետ համալսարանում սովորած ընկերս է:

27 **Տրված պնդումներից 3-ում սխալ կա: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. Բառի վերջից բաղադրիչ ավելանալիս բառավերջի գաղտնավանկի *ը*-ն ոչ միշտ է սղվում:
2. Շեշտի հետ կապված հնչյունափոխությունը տեղի է ունենում ձայնավորի (կամ երկհնչյունի)՝ շեշտից զրկվելու կամ շեշտի տեղափոխության պատճառով:
3. *Ույ* երկհնչյունը ենթարկվում է միայն երկու տիպի հնչյունափոխության. դառնում է *ու* կամ սղվում է:
4. Գործիականում *բ* ստանալիս տեղի է ունենում նախորդող բաղաձայնի հնչյունափոխություն (առնմանում):
5. Կրկնավոր բարդություն կազմելիս տարբեր տիպի հնչյունափոխությունների կարող է ենթարկվել միայն երկրորդ բաղադրիչը:
6. *Մտացածին* բառում *մտաց* բաղադրիչը գրվում է *ց*-ով, քանի որ այն *միտք* գոյականի հոգնակի սեռականն է գրաբարում:
7. *Դրացի, ձերբակալել* բառերը թեև կազմված են *դուռ, ձեռ* արմատներից, սակայն արտասանվում և գրվում են *բ*-ով՝ հետևելով գրաբարյան այն հնչյունական օրենքին, որ *ն*-ից հեռանալով (գրբ. *դուռն, ձեռն*)՝ նրան նախորդող *ռ*-ն փոխվում է *բ*-ի:
8. Կրկնակ բաղաձայններ առաջանում են հնչյունափոխության արդյունքում. հայերենում արմատական բառը կրկնակ բաղաձայն չի ունենում:
9. Բազմավանկ բառերի բառավերջի բաց վանկի *ի*-ն հնչյունափոխվելիս երբեմն սղվում է, երբեմն միանալով *ա* ձայնավորին՝ վերածվում *ե*-ի:

28 **Տրված պնդումներից 3-ում սխալ կա: Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. Գոյություն ունեն *իվ* ածանցով կազմված և՛ մակբայներ, և՛ կապեր:
2. *Անտաշ, անգետ, անել, անցավ, անսեր* բառերն ունեն իրենց համանունները:
3. *Ատ* ածանցով կարող են կազմվել և՛ գոյականներ, և՛ ածականներ:
4. Տարբեր խոսքի մասերի պատկանող բառերը կարող են կազմել հոմանշային զույգ:
5. *Ուստ* ածանցով կարող են կազմվել և՛ գոյականներ, և՛ մակբայներ:
6. Որոշ ածանցներ և հոլովական վերջավորություններ համանուններ են:
7. Բարդ բառերի կազմում բացի արմատներից և հոդակապից կարող են լինել նաև այլ մասնիկներ:
8. *Դժնատեսիլ, խոժոռադեմ, ժանտատես, դժոխալուր* բառերը հոմանիշներ են:
9. *Բարեսիրտ, հոգեբան, ալեհույզ, դարեդար, դափնեվարդ* բառերը հոդակապով բարդություններ են:

29 **Տրված պնդումներից 3-ում սխալ *չկա:* Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. Ի տարբերություն արևելահայերենի՝ արևմտահայերենում բացակայում է անձի առման քերականական կարգը:
2. ***Թռչկոտել, կտրտել, կեղտոտել, վազվզել, խշխշալ*** բայերը բազմապատկական են:
3. ***Իբրև, դեպի*** կապերը գործածվում են միայն բառի ուղիղ ձևի հետ:
4. Անորոշ, հարակատար և ենթակայական դերբայները հոլովվում են միայն փոխանվանաբար կիրառվելիս:
5. Բոլոր անձնական դերանունները եզակի և հոգնակի թվերում ենթարկվում են դերանվանական հոլովման:
6. ***Ան, են*** սոսկածանց ունեցող բոլոր բայերը չեզոք սեռի են:
7. ***Տեսնել, առնել, ելնել, բացել, թողնել*** բայերի անկանոնությունը դրսևորվում է միայն եզակի հրամայականի կազմության մեջ:
8. Ժխտական ձևաբայը միշտ նման է ըղձական եղանակի եզակի երրորդ դեմքի բայաձևին:
9. Գոյականի կրկնությամբ կարող են կազմվել ածականներ:

30 **Տրված պնդումներից 3-ում սխալ *չկա:* Նշել դրանց համարները:** *(3 միավոր)*

1. Բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունների քանակը հավասար է նրանում եղած բայերի քանակին:
2. Իբրև բաղադրյալ ստորոգյալի հանգույց չի կարող հանդես գալ ներգործական սեռի որևէ բայ:
3. Բացահայտիչ ստորադաս նախադասության ստորոգյալը միշտ բաղադրյալ է լինում:
4. Դերբայական դարձվածը միշտ ձևավորվում է խնդրառությամբ:
5. Եթե ***թե***-ն հանդես է գալիս իբրև համադասական շաղկապ, ապա նրանից առաջ որոշ դեպքերում ստորակետ դրվում է, որոշ դեպքերում՝ ոչ:
6. Որոշ պակասավոր բայեր կարող են ստանալ ուղիղ խնդիր լրացում:
7. Բուն բացահայտիչը չի կարող դրվել ներգոյական հոլովով և լրացնել տեղի պարագա բացահայտյալին:
8. Բարդ նախադասության կազմում ***մինչդեռ***-ը կարող է հանդես գալ իբրև համադասական շաղկապ միայն այն դեպքում, երբ նրանով կապվող բաղադրիչ նախադասությունը հետադաս է:
9. Միևնույն բայը միաժամանակ չի կարող ունենալ և՛ ուղիղ, և՛ հանգման խնդիր լրացումներ: